ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի ՆՄՀ երկրորդ հիմնական շրջափուլով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ» /ՇԻՆԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Կառուցվածքների սեյսմակայունություն ուսումնական ձեռնարկ»-ի մշակման նպատակով անհատ խորհրդատուի ընտրության

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը, Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ ծրագրի շրջանակներում նոր լաբորատոր աշխատանքների ձևակերպման, փորձարկման և ուսումնական գործընթացում ներդրման նպատակով հայտարարում է խորհրդատուի ընտրության մրցույթ: Խորհրդատուն պետք է ձևակերպի, փորձարկի և ուսումնական գործընթացում ներդնի նոր լաբորատոր աշխատանքները: Ընտրված խորհրդատուն պետք է ներկայացնի շինարարության ոլորտը: Մասնավորապես, ընտրվելու համար կարող են դիմել՝ կրթության գործընթացներում ներգրավվածության, կրթական ծրագրերի և ուսումնական նյութերի մշակման փորձ ունեցող մասնագետներ:

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՃՇՀԱՀ), «Կրթության բարելավում» վարկային ծրագրի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի երկրորդ հիմնական շրջափուլի շրջանակներում իրականացնում է «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ» /ՇԻՆԼԱԲ/ դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տրանսպորտային ուղիների շինարարության և շահագործման կրթական ծրագրի դասավանդման և ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը (կրթություն-գիտություն-բիզնես կապի ամրապնդում), կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը և ԲՈՒՀ-ի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի հիմնումը: Ծրագրի շրջանակներում ստեղծվելիք լաբորատորիայի աշխատանքների կազմակերպման, համապատասխան տեսական և գործնական հիմքերի ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև դրամաշնորհային ծրագրի շրջանակներում անհրաժեշտ ձեռնարկների ու մեթոդական ուղեցույցների մշակումը և այդ նպատակով հինգ համապատասխան ուղղություններով անհատ խորհրդատուների ընտրությունը:

Նշված Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել շինարարական կոնստրուկցիաների լաբորատոր սարքավորումներ, արդիականացնել գործող «Շինարարություն» մասնագիտության կրթական ծրագրերը, այդ թվում նաև՝ «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում» մագիստրոսական կրթական ծրագիրը և մշակել «Կառուցվածքների սեյսմակայունություն ուսումնական ձեռնարկ» (նվազագույնը՝ 100 էջ): Ուսումնական ձեռնարկի մշակումը նախատեսվում է իրականացնել անհատ խորհրդատուի ներգրավման միջոցով: Անհատ խորհրդատուի աշխատանքի նպատակն է արտասահմանյան գրականության, նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրման, վերլուծության արդյունքների և բուհի կողմից ձեռքբերված փորձասարքերի հնարավորությունների հիման վրա մշակել «Կառուցվածքների սեյսմակայունություն ուսումնական ձեռնարկ»: Անհատ խորհրդատուի աշխատանքները կիրականացվեն 3 փուլով՝ 1-ին փուլ՝ 2 ամիս, 2-րդ փուլ՝ 2 ամիս, 3-րդ փուլ՝ 1 ամիս տևողությամբ, որոնց ընթացքում կիրականացվեն ներքոնշյալ աշխատանքները.

1-ԻՆ ՓՈՒԼ

- Իրականացնել սեյսմակայուն շենքերին ներկայացվող հիմնական պահանջների վերաբերյալ արտասահմանյան (նվազագույնը 2 երկրի) գրականության և նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում, վերլուծություն, համադրում:
- Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա նախապատրաստել ուսումնական ձեռնարկի կառուցվածքը:
- Իրականացնել ուսումնական ձեռնարկի ներածության մշակում:
- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Շինարարական կոնստրուկցիաներ» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության, վերանայել դրանք:
- Փուլի ավարտին պատրաստել հաշվետվություն և ներկայացնել Ծրագրի ղեկավարին՝ ներառելով այս փուլում մշակված փաստաթղթերը:

2-ՐԴ ՓՈՒԼ

- Իրականացնել կառուցվածքների սեյսմակայունության վերաբերյալ ուսումնական ձեռնարկի առաջին գլխի մշակում, որտեղ նաև կձևակերպվեն սեյսմակայուն շենքերի հաշվարկի հիմնական դրույթները:
- Իրականացնել կառուցվածքների սեյսմակայունության վերաբերյալ ուսումնական ձեռնարկի երկրորդ գլխի մշակում, որտեղ նաև կձևակերպվեն շենքի հաշվարկի օրինակ ըստ գործող շինարարական նորմերի՝ կիրառելով Лира-САПР համակարգչային փաթեթը:
- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Շինարարական կոնստրուկցիաներ» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:
- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության, վերանայել դրանք:
- Փուլի ավարտին պատրաստել հաշվետվություն և ներկայացնել Ծրագրի ղեկավարին՝ ներառելով այս փուլում մշակված փաստաթղթերը:

3-ՐԴ ՓՈՒԼ

- Իրականացնել կառուցվածքների սեյսմակայունության վերաբերյալ ուսումնական ձեռնարկի երրորդ գլխի մշակում, որտեղ կձևակերպվեն կոնստրուկցիաների հաշվարկներ՝ ըստ առաջին և երկրորդ խումբ սահմանային վիճակների: Կներառվի նաև շենքի կրող համակարգի կոնստրուկտավորում բաժինը:
- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Շինարարական կոնստրուկցիաներ» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացնել մշակված նյութերը և իրականացնել անհրաժեշտ քննարկումներ:

- Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից, մշակված նյութերի վերաբերյալ քննարկումների արդյունքում ներկայացված համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հիման վրա, ըստ անհրաժեշտության, վերանայել դրանք:
- Փուլի ավարտին պատրաստել հաշվետվություն և ներկայացնել Ծրագրի ղեկավարին՝ ներառելով այս փուլում մշակված փաստաթղթերը:

1. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *(Կարող է փոփոխվել՝ կախված անհատ խորհրդատուի հետ պայմանագրի կնքման ամսաթվից)*

Անհատ խորհրդատուի աշխատանքները կիրականացվեն 3 փուլով՝ հետևյալ ժամանակացույցի համաձայն.

- առաջին փուլ՝ **01.10.2020-30.11.2020**
- երկրորդ փուլ՝ **01.12.2020-31.01.2021**
- երրորդ փուլ՝ **01.02.2021-28.02.2021**

2. **Հաշվետվությունների ներկայացում**

Անհատ խորհրդատուն յուրաքանչյուր փուլի ավարտից հետո 5 օրյա ժամկետում պետք է ներկայացնի հաշվետվություն դրամաշնորհային Ծրագրի ղեկավարին, որը կհամարվի ընդունված՝ ծրագրի ղեկավարի կողմից ընդունվելու պարագայում: Յուրաքանչյուր փուլի հաշվետվությանը պետք է կցվեն այդ փուլում կազմված համապատասխան փաստաթղթերը:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ, ՓՈՐՁ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ *(30 միավոր)*

- Բարձրագույն կրթություն ճարտարագիտության (շինարարության ոլորտում), ինչպես նաև առնվազն թեկնածուի գիտական աստիճանի առկայություն:

- Տրանսպորտային ուղիների շինարարության և շահագործման, շինարարական կոնստրուկցիաների նախագծման ոլորտներում նեղ մասնագիտացումը կդիտվի իբրև առավելություն:

- Հայերենի՝ գերազանց, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ *(40 միավոր)*

- Համապատասխան ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, որից 3-ը բուհական համակարգում դասավանդման և գիտամանկավարժական գործունեության փորձ:

- Համակարգչային՝ Microsoft Word, Excel, Internet ծրագրերով աշխատելու հմտություններ:

ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ *(30 միավոր)*

- Ուսումնական ձեռնարկների/ուղեցույցների/ուսումնամեթոդական փաթեթների մշակման փորձ:
- Մասնակցությունը միջազգային այլ ծրագրերի, վերապատրաստումների, փոխանակման և շարժունության ծրագրերի կդիտվի որպես առավելություն:

«Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի «Ուղեցույց. ՄԶՎԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուի կողմից խորհրդատուների ընտրություն և վարձույթ» («Խորհրդատուների ուղեցույց», 2011թ. հունվար, վերանայված 2014 հուլիս) «Անհատ խորհրդատուի ընտրություն» ընթացակարգի համաձայն»:

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,
- Կրթությունը և փորձը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամ՝ ք. Երևան, Վ.Տերյան փող. 105 հասցեով, (էլ. փոստ. info@nuaca.am) մինչև 03.09.2020թ., ժամը 12:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ (010)58-37-73 հեռախոսահամարով:

«Ճարտարապետության և շինարարության

Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի

ռեկտորի ժ/պ պրն. Ե Վարդանյանին

Դիմող՝ _

հասցե՝ _

հեռախոս՝ _

Էլ. փոստ՝ _

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում կրթական ծրագրի արդիականացումը՝ նորագույն փորձասարքերով հագեցած լաբորատորիայի ներդրմամբ» /ՇԻՆԼԱԲ/ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Կառուցվածքների սեյսմակայունություն ուսումնական ձեռնարկ»-ի մշակման նպատակով անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ Ինքնակենսագրական տվյալները (CV), կրթությունը և փորձը հիմնավորող փաստաթղթեր:

Դիմող՝ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

(անուն ազգանուն)

«___» «_ _ _ _ _ _ _ _» 2020թ.